



ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ
 Պոչխարիոյ համար 3-9
 Տարեկան 12 Գր.
 Վեցամսեայ 6 "
 Արտասահմանի համար Տարեկան 15 "
 Վեցամսեայ 8 "
 Ամերիկայի համար Տարեկան 3 Գր.
 Վեցամսեայ 1.50 "
 ԳԱՆՏԻԿ Վ.Ճ.Ի.Բ.ԷԼԻ
 Իրանոցական սոցիալական կուսակցութեան համար 40 սանթիմ.
 Ե. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ Ե. երեսին աւելի սակաւներու համար 20 Օլ. գեղջ կըլլայ :
 Վաւանայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒ

R. P. Kalmencarian, Mochitaristougasso W. 4
 (Autriche)

«Шаржумъ»
 Варна
 Редакция на вестника
 «Шаржумъ»
 Варна
 Редакция du journal
 «Charjourn»
 Варна (Bulgarie)
 «Պոչխարիոյ համար ձեռքի»
 (15 ՍԱՆԹԻՄ)
 «Պոչխարիոյ համար ձեռքի»
 (20 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐՋՈՒ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Արդէն թերթերը հազորդեցին որ Ռուսական դեսպան, Ջիւնովիէզ, Պոլիս վերադարձին ներկայացաւ Սուլթանին և յայտնեց իր Ձարիւն իղձերը Մակեդոնիոյ վիճակին վերաբերմամբ :

Սուլթանը որ հազարաւոր առիթներ ունեցած է, աւելի տազնապալից անցելի մը մէջ, արքայական «իղձեր» լսելու, անակնկալ նորութեան մը հանդէպ չի գտաւ ինքզինքը Ջիւնովիէզը ընդունած պահուն : Ռուսի առանց պաղարիւնութիւնը կորսնցնելու, բացաւ իր խոստումներու յաւիտենական տապարակը, ու կրկնուեցաւ նորէն աշխարհի ամենէն զաւրիբ ու միանգամայն ամենէն զաւշտական կատակերգութիւններէն մէկը — խոստում Մակեդոնիոյ բնակիչներուն, կեանքի ու ինչքի ապահովութեան մասին, խոստում մահմետական ամբոխին շափազանցութիւնները զսպելու և յանցաւորները պատժելու մասին, խոստում կաշառակեր, վատ ու գազան պաշտօնեաները իսկոյն հեռացնելու մասին, եւն. անվերջ խոստումներ որոնց իրագործութեան արդէն իսկ չի հաւատար ո՛չ խոստացողը և ո՛չ ունկնդիրը, այնքան փորձառութիւնը անժխտելիօրէն ապացուցած է անոնց շարագուշակ դատարկութիւնը :

Սակայն ամիսներ առաջ, նոյն դեսպանը ուրիշ պաշտօնակիցներու հետ և առանձին, դարձեալ նոյն Սուլթանին դիմած էր տարբեր «իղձեր» արտայայտելու համար, որոնք գազանը պիտի զինէին անպաշտպան ու հարստահարուած ազգութեան մը դէմ : Ու մէկէն մէկ պարզուեցաւ զարհուրելի սխրագործութիւններու, ձերբակալութեանց, բանտարկութեան, թալանի ահեղ շրջան մը. հարիւրաւոր անմեղներ բանտ բռնւն մէջ, ահաւելի տանջանքներուն տակ իրենց անմեղութիւնը քաւեցին :

բազմաթիւ ընտանիքներ քանդուեցան և իրենց զոհ տուած անդամին սուգովը հալեցան, գիւղացիները ա՛լ աւելի սասուկութեամբ սկսան ենթարկուիլ կառավարական պաշտօնեաներու կեղծքուճներուն, և այս ամէնը Սուլթանը կատարել տուաւ խղճի կատարեալ անդորրութեամբ, քրիստոնեայ բարեհաճ պետութեանց շըլլալի՛ք «իղձեր» գուհացնելու համար :

Երբ ալ ամէն բան կատարուած էր, երբ արցունքը հէք մակեդոնացիներու աչքերը կողովէր թանկացին կորուստին անդարմանելի կսկիծով, սրուն արձագանքը ինչպէս կը վրդովէր ու հոգիները կը մտնուեցնէր, Եւրոպա անշուշտ իր դժոխային «իղձեր» պէտք եղածէն շատ աւելի գոհացած գտաւ, և մինչև իսկ, արդար ըզրոքներու պատճառելիք աւելորդ գլխացաւերուն տեղի չի տալու համար, յարմար դատեց սուլթանին արտայայտելի նորանոր «իղձեր» թո՛ղ արդարները չի պատժուին և յանցաւորները շուտ դատուին : Այս չոր ու ցամաք ազգարարութիւնը բաւեց, որպէս զի Սուլթանը իսկոյն դադարեցնէ սկսած ոճիրներու շարքը, և միւս կողմէ բարեկարգութեանց խաբեբայ խոստումներով օրորէ պետութիւնները, որոնք շատ չեն ախորժիր արդէն իրենց դիւական քունը խռովողներէն :

Մահուան դատապարտուած կարգ մը յեղափոխական պուլկարներ Սուլթանական բարձր ներումին արժանացան, նոր ձերբակալութիւնները ժամանակի մը համար դադարեցան, բայց Սուլթանը արդէն իր գործերը տեսած էր :

Միեւնոյն ժամանակ համիտ անհրաժեշտ գտաւ ոսկոր մը նետել իր Հիւսիսի Արջին բերանը, որ շատ նպաստաւոր տրամագրութիւններ չէր ցոյց տար և Սերպիոյ ու Պոլիարիոյ հետ իր հաստատած կապերով ահեղ սպառնալիք մը կը գառնար Սուլթանի գահին : Ռուսի Համիտ յայտնեց Ջիւնովիէզի թէ՛ օտ.

պանքային հետ համաձայնութեամբ մը պիտի վճարէ պատերազմական տուգանքին յետնեալ գումարները :

Բայց մինչև և՛ որ կարելի պիտի ըլլայ շարունակել այս ոճրագործ դաւակցութիւնը ընկճուած ազգութիւններու հանդէպ : Վ.սղը Մակեդոնացիին կրկին պիտի բարձրացնէ իր ձայնը, կրկին տրտունջ, կրկին բողբոք, մինչև որ զսպուած վրէժները զէւրի շաշիւնին խառնուած սարսափեցնեն գաղանը իր գառազեղին մէջ, և քոյր ազգութեանց բնական աջակցութեամբ, նոր կրէսէ մը առաջ բերեն, որուն առջև եւրոպական դիւանագիտութիւնը ակամայ տեղի տալ հարկադրուի :

ՆՈՐ ՀԱՆԴԵՍ ՍԸ «ՓՈՂՈՎՈՒԹԻՆ ՀԱՍՍՈՒ»

(Շար. նախորդ թիւին և վերջ)

«Իւրեցանք» ընդհ. վերնագրին տակ «Յոյսի ճամբան» հայ երիտասարդութեան ուղուած բանաստեղծութիւնը—աւելի քնարերգակ դիւցազնեղութիւն մըն է—կարգալուծ հպարտ և ուժեղ շունչ մը կ'առնես : Թէ իբր գրուած և թէ իբր զգացումի արտայայտութիւնը, Հայրենիքը շարչարող ու նահատակող նոյնիսկ յուսահատութիւն պատճառող բանաստեղծներէ հոգը—մեր բանաստեղծութեան անանկութեան շրջանը—կզգաս նոր բանաստեղծութեան մէջ, «Մեծ եղեռնին» դիմաց, վրէժխնդրութեան մոլեգին ուժը, կզգաս որ այդ սողերուն մէջ թաւալող յուզումը զայրոյթը, դիւցազնութեան սարսուռը, կը համապատասխանէ մեր հոգեկան հե ի հե խռովին : Ազգային մեծ արհաւիրքը՝ դիւցազնական երգը ու փոթորիկ արշաւները երկնած է հոն :

Գաւառական ազուրգած ամենութիւնը կայ հոն հրաշէկ երեւակայութիւնով, փոթորկալից, ցնցող բաշերով, կը կարգաս խոսվող տենջով մը յոյս տողերը, որոնք վրէժխնդրութիւնով չի յագեցած կը վազեն վրէժ լուծելու... : Տեսէ՛ք սա մոնչոյ ու վայրենի այլ հոյակապ պատկերը : «Եւ իրենց փշրող ակոսներուն տակ հրաշէկ դանակներ զրոշմնէն»...

Ըմբոսացողներն են անոնք, «Բանալու համար մեծ ճամբաները Յոյսին Արպէս զի վերջապէս, երազն ձիերը փոթորկանման, Մեր կամքի ձեռքերն են, դիւցազնաբար վարուելէն Յազթանսկի կատարները արժանանան... :

Հիանալի չե՞ն այս հերոսական սողերը, որ կուզան սարսափահարել մեր տափակ գրականութիւնը : Ապառաժի կուրծքէ հոսող ջուր խմած ըլլալու է գորղը :

Աննման ու զահանդող վեհութիւն մը ունին այն բարգասարբ ու հերարձակ մայրերը», որոնք իրենց «լայն ու լուսաւոր կողերուն տակ»

«Մեր ժողովուրդները փառաւորութեամբ

«Մոլեգին դիւցազններու կարմիր երկունքը կապրին... :

Մեզի համար նոր սեռ մը, մասձել տուող, միաբը դաշունդ և նախնական երգի մը պէս վայրագ, բայց դիզարուեստական, Առաջին անգամ իր թիւն կը թուի իր յանդուգն և յախուուն պատկերներով, խորհրդածուելով, արձակ սողերով, կրեւակայութեան անսովորութիւններով, բայց կընտելանանք մէկ երկու փորձէն հոգը, կը գտնենք բանաստեղծական այն հետաքրքիր և մխիթարական գոհացումը ու գորովը՝ զոր երկար առնէ կորսնցուցած էինք : Ծմարառապէս յեղափոխական և անվայրապար էջ մը, կիրքի ու բարկութեան ելեւեջներուն պէս անհամաչափ, սարսափ ու տառապանքի մեծութեան պատշաճ լիզու մը : Կր սպասենք որ հեղինակը շարունակէ տալ մեզի իր ջղերուն արիւնսա և վրէժխնդիր երկունքը, սարկոտ փառասորումներով «մեր բերանն ու հոգին ընդզուրթ ստիքներուն երկարելու համար :

Միւս յոյուածները նորվալպի ձեւով գրական խնամքով գրուած աղուսր սողեր են :

«Հայաստանի ուղղուած» արձակ բանաստեղծութիւնն է ըմբոսացումի սիրուն մրմունջ մըն է :

«Ե՛կալի ընդզուրթ» ներքող և հրաւեր մը զէպի գէնքը, բարբարոսութեան աշխարհին մէջ, «գոնէ մարգու պէ մեռնելու համար» :

Մեր մէջ հարկաւոր է հայրենասիրական սողը անկեղծ և լայն դրականութիւն մը, պայմանները խիստ նպաստաւոր են : Իւրեցանական շրջանին մէջ ենք, առիթ մըն է որ մեր գրական պատմութեան մէջ քանի մը պարծենկոտ էջեր բեւեռենք : Ասոնց հետ միասին հեռու մնալ

չատ մարդաբանութիւններ ընելէ . «ես» օրհնարանութիւնները , մուրացկանութիւնները վտարել եւ ի հարկին խարազանել եւ a posteriori իմաստակ խոհեմութեան , իւրեքի վաճառակալութեան ջրհամ եւ աննեղելի քարոզներ չի կարողալ : Ազգուշանալ թերթը — որ Պոլսոյ «խաւալական երիտասարդութիւնը պիտի ներկայացնէ — լսելով փաստաբանութիւններու բնի ընելէ : Հաւատարմութիւններ վերնագրին , պէտք է մոռնալ ինքզինքը եւ ձգել ամէն ինչ հասարակութեան գնահատումին եւ ոչ թէ զօրել որ անպատճառ հիացուի իրենց վրայ : Եթէ մեր հասարակութիւնը ունի անթիւ թերութիւններ , այնքան գէշերուն մէջ , ունի եւ գեղեցիկ ծաղիկ մը . ինքնագովութեան խորունկ ատելութիւնը :

Գրական այդքան արժանաւոր թերթի մը մէջ , լաւագոյն էր ըստ իս վճիտ եւ սիրուն լեզուով թարգմանել յոյն կամ լատին գասական լաւագոյն գլուխ գործոցները . քանի որ չենք կրնար այժմ գրքի ձեռքով հրատարակել : Մեր ժողովրդին մատչելի ընել այդ կենդանի գործերը՝ փոքրիկ ծառայութիւն չէ :

«Ժողովրդին համար»ը եթէ իր ոչանվիճելի անկախութիւնով , իր ազգային անմիջական գիտակցութիւնով , կը նետուի ասպարէզ , մեր ժողովրդի ակնշիջ փրկութեան երանուէտ երգը երգելու համար , եւ ոչ մեծամոլիկ եւ այլամբժ նկատումներու գոհացում տալու համար — ինչ որ չը պէտք է յուսանք — պատիւ մըն է հայ երիտասարդութեան , զի այն օրը՝ երբ ազգի մը երիտասարդութիւնը անկեղծ , անհաւանդիր չէ , այդ ազգը չի կրնար ս եւ է ապագայի յոյս ունենալ :

Կը սպասենք որ ազգային այս «ընդգլուխ» բոլոր ջանքերը շուտ տան երեսնիս դէպի մեծ նպատակը , որ կը պահանջէ անհուն անձնութիւն եւ sacrificium intellectus :

Ս. Մ.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ի. Վ Ա Զ Ո Վ

ՈՉ ԿՐ ԽՂՃԱՆ, ՈՉ ԿՐ ՍԻՊԵՆ

VI

(Շար. նախորդ թիւին)

Պրըջքով Պրաիւայի մէջ կը թափանէր , իր նախկին ծանօթներէն միայն հաճին գտաւ : Նա աղիւս շինողի մը խրճիթը կը գիշերէր , Պրըջքովը ալ առին : Հաճին ցորեկը նաւահանագիտը կը բանէր , իսկ իրիկունը կերթար հացը Պրըջքովին հետ կիսելու : Բայց հաճին միշտ չէր կրնար իր հացը ճարել : Չմեռ ժամանակ գործերը շատ կը քիչնան նաւահանագիտները : Ան առնել երկուքն ալ անօթի կը ՚իւային :

— Ինչո՞ւ հօրդ չես գրեր որ քեզի գրամ ուղարկէ , վերջապէս հարցուց օր մը հաճին — միշտ այսպէս անօթի պիտի պտտիս :

Պրըջքով ախրեցաւ :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՅԻԱ , 11 Յունիս

Ժամանակէ մը ի վեր «Իրաւունք» եւ «Հայելի» թերթերու Պ. թղթակիցները տեղւոյս պատ. թաղ. խորհրդոյ գործունէութեան գէժ քննադատութիւններ կը ընեն . շիտակը միւթարական է այս երեւոյթը , լաւ է անազան քան երբեք :

Ազգին գործերը այդ մարդոց յանձնուած միջոցին , արդէն ժողովուրդը բողոքեց , պոռաց ու գոռաց : Մանաւանդ «Արեւելք»ի մէջ երկարօրէն գրուեցան ատոնց թերութիւնները , բայց դժբախդաբար երբեք նկատուած չառնուելէ զատ , մեր Պ. թղթակիցները ամէն շնք գործ գրին ժողովրդին ձայնը խեղդելու համար , կարծելով թէ ատոր մէջ ալ «Ինչնակցութեան» մատ կայ : Բայց ուրախ ենք որ հիմա իրենք ալ համոզուեցան թէ այդ մարդիկը անօգուտ ու աւելորդ են :

Պարոն թղթակիցները կը հարցնեն թէ «Ի՞նչ եղան թատրոնէն գոյացած 350 ֆրանքը» :

Մենք զանց կընենք մանրամասնութեանց մէջ մտնել այդ գրամներուն զաւելտական պատմութիւնը կրկնելու համար : Ամէն Սօֆիացի հայ պիտի կարողանայ իսկոյն հասկնալ , եթէ փոքրիկ հետաքրքրութիւն մը ցոյց տայ . . .

Ինչ որ ամենէն ցաւալին է , Այցելու հովիւին անտարբերութիւնն է :

Այցելու հովիւը պէտք չէր որ այդ մարդիկը գործի մէջ մըտցընէր , որպէս զի թէ՛ ժողո-

վուրդը չի զայնակղէր եւ թէ՛ Սօֆիայի հայութիւնը չի վնասուէր :

Իսկ դաւով Գեր. այցելու հովիւին վերջին հրահանգին թէ «Իւրաքանչիւր անհատ, եթէ իրեն որոշեալ ազգային տուրքը չի վճարէ , քուէարկութեան չի պիտի կրնայ մասնակցել» , ըստ իս անիրաւութիւն է , վասն զի խեղճ գաւառացին որ հազիւ թէ իր օրապահիկը կը հայթայթէ , դրամ չունենալուն համար քուէարկութեան իրաւունքէն պիտի զրկուի , իսկ անգին ցոփ ու անպատկառ միջոցներով ազգին դրամը մտաղ ու տարիներէ ի վեր անառակ կրնան հետ ապօրինի կենակցութեամբ ապրող անձերը թաղ. խորհրդոյ անգամ կընտրուին , ու թերեւս յառաջիկայ ընտրութեան միջոցին ալ այդպիսիները ընտրելի նշանակուին : Սակայն Գերապատիւ այցելու հովիւը ու իր մէկ հատիկ խորհրդականը պէտք է քիչ մը անաչառ ըլլան ու ազգին օրէնքները անկեղծօրէն յարգեն իսպառ հեռացնելով այդպիսիները վարչական գործերէ : Արդէն Սահմանադրութիւնը չի ներքեր որ ապօրէն կենակցութեամբ սպորողներ վարչական գործերու մէջ մտնեն : Այցելու հովիւը այսչափն ալ չի գիտեր :

ԻՐԱԶԷԿ

ՅԱԾՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Քաղաքիս ազգային երկսոս վարժարանի շինութիւնը ձախորդ հանգամանքներու տակ սկսած ըլլալով գլուխ հանելու համար չէնք պուկարական ազգային դրամատան գրաւի տրուեցաւ ու դժբախտաբար այդ պարտքը տոկոսով մինչեւ ցայսօր

Պրըջքով քիչ մը կարմրեցաւ ու ըսաւ .

- Եթէ նոր խումբ կազմուի , փափաք ունիմ Պուլկարիա անցնելու :
- Նոր խումբ , Չեմ հաւատար :
- Բայց ես Սվիթթովի մէջ այնպէս լսեցի : Ի՞նչ : Միթէ ալ չը պիտի կոտորես :
- Հաճին քիչ մը մտածեց :
- Եթէ նոր խումբ կայ , ես ալ մէջը կը մտնեմ : Ո՞վ գիտէ , շատ կարելի է որ կազմուի , կըսեն թէ Սերպիայ էնիմանաեթը պիտի գայ եղեր , շատ կարելի է որ ատոր համար ըլլայ : Կօմիտէն ալ ետանդուն գործունէութիւն ցոյց կուտայ . . . Եթէ մարդ մեռնի , դիտանալու է ինչու համար պիտի մեռնի , այս կեանքը , անասունի կեանք է , աւելցուց հաճին ու թքաւ :
- Ուր է Մաքէտոնսքին :
- Մօլտավիա , կըսեն թէ հարուստ չօքօյի մը քով լօկօֆէթ (՝) եղեր է :
- Հապա՞ Բօքչէթօն :
- Ան ալ պարտիպանի մը քովէ է , որ այն պայմանաւ առած է , որ դարնան ալ անոր սոխ անկէ : Իսկ

(՝) Ազարակներու կամ կալաններու իերակացու :

վճարելու հնար մը չի գտնուելուն եւ պայմանաժամի ալ լրացած ըլլալուն , դրամատան կողմէն աճուրդի հանել որոշուեցաւ :

Արդ Թաղ. Խորհուրդս նկատելով որ չը կայ ուրիշ միջոց բայց եթէ իր տեղէն դուրս բարեսիրտ ազգայիններու օգնութեանը դիմել , ուստի եւ քաղաքիս պատուաւոր անձնաւորութիւններէն Տեաք Յովհաննէս Պոլսեան եւ Յարութիւն Մ. Կարապետեան՝ Ռուսմանիա , իսկ Մելքոն Մ. Դաւիթեան եւ Յարութիւն Թօզանեան՝ Պուլկարիա որոշեց զրկել հանգանակութիւնը կատարելու համար : Չայս ծանուցանելով հրապարակաւ խորհուրդս կուգայ խնդրել Պատ. ազգայիններէ , որ երբ յիշեալ անձինք ներկայանան իրենց , բարեհաճին շնորհել յօժարակամ նուէրներ , որով միայն կարելի պիտի ըլլայ եւ ոչ մէկ ուրիշ հասութիւն ունեցող այս կրթական յարկը կանգուն պահել եւ յառաջիկային ալ շարունակել մատաղ սերունդին կրթական ամենակարեւոր գործը :

Թաղ. Խորհուրդ Տիպրիչի (ԿՆԻՔ) Տպրիչ , 14 Յունիս 1901

Ա Չ Ա Ս Բ Ե Մ

Առ յարգելի խմբագրութիւն Իրաւունք շրագրոյ Վառնա

Տէր խմբագիր :

Եւ որովհետեւ ձեր լրագրոյ 41 թիւին մէջ մեզ ուղղած հրապարակային յայտարարութիւնով մը , տեղի կուտաք կարծելու թէ պատասխանատուութենէ փախչելու կանխակալ արամադրութիւններ ունիք , ներկայիս դարձեալ կը կրկնենք ու կը խնդրենք որ բարեհաճիք այլեւս առանց ս եւ է յապաղման , ձեզ զրկուած բացատրութիւնը , ի մասին լրագրոյդ 38 թիւին մէջ

միւսները կամ գործի են , կամ մեզի պէս սոված են , սաի կեանք չէ , այլ դժոխք , իշու կեանք . . . խումբը աւելի լաւ է : Ես դեռ գէնքերս կը պահեմ , չեմ ծախեր զանոնք :

Յանկարծ Պրըջքով անոր նայեցաւ ապուշ կտրած :

— Հէյ , որքա՞ն վայրենի ենք , ատշափ օրեր սոված մնացինք , եւ չինք գիտեր որ դրամ կրնանք ստանել :

Հաճին դէմքը փայլեցաւ :

— Ո՞րտեղէն , շուտով մը հարցուց :

Պրըջքով հագուստները ցոյց տուաւ .

— Կը տեսնաս , բաճկոնս դեռ նոր է , եւ բանթալօնս ալ դեռ աղէկ է . . . դէպի այս կողմերը չեկած առած եմ , ժամացոյցս ալ , Ասոնց համար առնուազն 50 ֆրանք կ'առնեմ :

Հաճին ոգեւորուած էր :

— Պրափօ , անասուններ ենք եղեր . . . այսինքն ես , ներքէ , յանդակցայ ձեզի ըսելու . . . Երթանք , երթանք , կամացուկ մը սկսաւ երգել «Մենք չենք ուզեր հարստութիւն , մենք չենք ուզեր դրամ» . ու արագ արագ քաշեց տարաւ Պրըջքովը փողոցներէն դէպի անմաքուր շուկայ մը , ուր հրեաները հնացած իւրեր կը

երեւցած անթրփիլէին, հրատարակել անփոփոխ տպագրական օրինաց տրամադրութեան համաձայն և այսու բաւարարութիւն տալ մեր սա շատ բնական պահանջին:

Մեր այս ներկայ գրութեան պատճէն պիտի զրկուի տեղական մամուլը ի գիտութիւն ժողովրդեան թէ ո՛րքան օրինական է մեր պահանջը, իսկ հակառակ պարագային ձեռք առնելիք միջոցներու արդարացման համար:

Հաճեցէք ընդունիլ մեր պարտականութիւններ:

Ի գիմաց թատերասէր մասնախմբին:

Մ. ԶԳՕՆ

ԲԱՅ ՆԱՍՏԱԿ

Պ. Ճանկիրեանին

«Ժողովրդային Միութիւն» անունով կազմակերպութիւն մը առաջ բերած էք, և այդ նպատակով ալ դրամ հաւաքած: Ամենու ալ միակ իշխան ու փափագն է այդ միութիւնը, որուն հեղինակը մեզի համար միշտ յարգելի պիտի մնայ, եթէ երբեք անոր զգացումներուն ու հայեացքներուն ուղղութիւնը մութի մէջ չէ, ինչպէս ձերը՝ քանի որ չէք ուզեր միութեան խնդրին մէջ ձեզի հետ նոյն փափագն ունեցող անձերու հետ համերաշխութեան մը յանգիլ:

Ձեր անցեալ և ներկայ յեղիսփոխական գործունէութեան վրայ հայեացք մը նետելով, հոն կը տեսնանք իրար հակասող արարքներու և իրարու անհաշտ գաղափարներու յաջորդական յարմար շրջան մը. 1890 թուականին

Գում-Գարուի անդրանիկ ցոյցին, որ կազմակերպուած էր Սուլթանին հայոց ցաւերը ներկայացնելու և դարմանը խնդրելու նպատակով, զուր Սուլթանին թուրան կոտորելիք: Միտքս թուրան կոտորելիք այսպէս չէ, այլ մատնանի ընել ցոյցին բնոյթին հակասող մէկ արարքներ, միակ ծնունդը ձեր խելագատակին, քանի որ, եթէ կը յիշէք, թուրան կոտորելու որով չափ հակառակեցաւ և տրգելք եղաւ Պ. Համբարձում Պոյաճանն (*) (Մուրաւ):

Արեւելէն աղատելուդ ետքը, Վերակազմակերպութեան յարեցաք ու նազար Բէկի դէմբլաք. քիչ վերջը Հնչակեաններէն ալ զատուելով՝ Գաշնակեցականներու գիրկն ինկաք և սկսաք Հնչակեան կարեւոր գործիչներէն գրեթէ ամենուն դէմ անիմաստ ու անհեթեթ քննադատութիւններ ու զրպարտութիւններ տեղալ մերթ գրաւոր մերթ բերանացի. օրինակ ձեր տիրահամբաւ դիմակաւորները, զոր լրջօրէն ընթերցող մը դիւրաւ կրնայ համոզուիլ զուտ անձնական և ո՛չ հանրային հաշուով Հնչակեաններէն բաժնուած ըլլալնուդ:

(*) Ինչ որ ալ ըլլայ, Պ. թ. փ. երբեք չի կրնար գառապարտել ձանկիրեանի այդ արարքը, որ իրամողջ գոյութեան մէջ, իր միակ գովելի գործը պիտի կազմէ անշուշտ: Հայ յեղափոխութեան այդ անդրանիկ փորձին մէջ, ամեն ճշմարտագէտ խանդավառ հայ աւելի անկեղծ չի պիտի ըլլար, քան թէ ձանկիրեանը: Պայլը Ալին ալ խաղաղասիրական էր բայց արիւնով վերջացաւ: Ապահովագէտ հոն ալ ձանկիրեանին չէր յանցանքը:

Ծ. Խ.

Գաշնակեցութեան մէջ ալ «միութեան» տեղի տալու, նոր ասպարէզ մը պէտք էր ձեռքի, յաւանական ճառերնիդ լսելի ընելու համար, այն ճառերնիդ՝ որոնցմէ փոխելու չափ կը շտապան ներկայուող, եւրոպայ և կովկաս: Վերջապէս պատրուակ մըն ալ գտաք Գաշնակեցութեան զատուելու. ինչ ընէիք, «զուր որ հայրենիքի հարազատ զուտ և ժողովրդի ներկայացուցիչ» պարագ չէիք կրնար նստիլ, «խարար» տուիք ժողովրդային Միութիւն անունով կազմակերպութիւն մը ստեղծելու և անոր միայն վարչապետը ըլլալու, կազմակերպութիւն մը, որ իր կարգին հանրութեան զլխուն պատուհաս մը դառնալու սահմանուած է ասպահովարար:

Հիմայ, Պ. ձանկիրեան, վերջին խօսքս ըսեմ ձեզի էք բարեկամ: Պէտք է գիտնաք որ, ձեր հակասական արարքները, հանրային շտա կարծ շրջանի մը մէջ, նկատի առնող ձեր վրայ ո՛չ հերոսի, ո՛չ յեղափոխականի տիպարը կը տեսնէ, այլ անգոյն ետմտի մը կամ հիւանդ փառասէրի մը պատկերը. երկուքն ալ ձեզի համար նպաստաւոր չեն: Եթէ կուզէք իսկապէս օգտակար ըլլալ հանրութեան, եթէ անկեղծ են ձեր զգացումները, որոշ ուղղութիւն մը ընդգրկեցէք: Հակառակ պարագային կը ցաւիմ ըսելու որ, անանկ պատակարարի մը պիտի պատկանիք, որ «յեղափոխութեան մակարոյժներու» մէջ կրնայ միայն իր տեղը ունենալ:

Սիրելի Պ. ձանկիրեան, այսչափ շիտակ խօսելու մի վշտանաք. դիտեցէք որ ձեր թերութիւնները ձաղկողը ձեր բարեկամն է, ոչ թէ փայփայողը:

Թ. փ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիզի մէջ հայ թատերական ընկերութիւն մը կազմուել է ազգային բեմը զարգացնելու նպատակաւ: Ընկերութիւնը բաժնեթղթեր հանած է 25 և 100 բուլլետնայ: Վարչութեան անդամներն են Պ. Պ. Յ. Տիգրանեան, Գ. Խարաչեան, Ա. Խատիսեան, Պ. Գօլուխանեան և Գ. Մելիք-Ղարազէօղեան: Վարչութիւնը ձեռնհաս անձեր պիտի հրահարէ իր բեմերթուարը կազմելու համար և բանակցութեան մտեր է Պազուի դերասանական խմբին հետ, որպէս զի այդ խումբը թատերական սեզոնին մէկ մասը Թիֆլիս անցնէ: Գործին նախաձեռնութիւնը կը պատկանի իշխանուհի Մ. Թումանեանցի:

— Յունիս Յին Թիֆլիսի մէջ հոգեհանգիստ կատարուել է ի յիշատակ մեծ ողբերգու Պետրոս Աղամեանի, իր մահուան տասնամեայ տարեդարձին առթիւ: Արարողութեան էտքը այլ և այլ ճառախօսութիւններ եղբր են հանգուցեալին կեանքն ու արժանիքը գրուատող:

— Հայոց կաթողիկոսը մօտ մամանակի մէջ պիտի այցելէ Խրիմ և Պետարպիս:

— Խիզանէն Արեւելքի տրուած տեղեկութիւնները տեղւոյն որբանցին վերաբերմամբ, խիտ աննպաստ են: Կասկածներ կը յայտնուին եկած մասական նպատակներուն կիրառութեան մասին: Բաղէշի առաջնորդը կարգ մը բացատրութիւններ պահանջած է վանահայրէն:

Խնդիր-կատարի որբանցէն ալ երեք որբեր արտաքուեր են

գնէին ու կը վաճառէին:

Աստուծ Պրբնով բոլորովին ուրիշ զգեստներով եկաւ: Բաճկոնին ծայրերը մաշուած, մզած, իւղոտած վիճակով և բանթալօնը հին ու ծուկերը մաշուած ու կաշիով կարուած, կօշիկներու փոխարէն, ծանր, տաճ ու կորացած զինուորի մուճակներ, իր առջի զգեստներէն միայն, դրօշակապետէն նուիրուած՝ զխարկը մնացած էր:

Պատաստուն հագուած, բայց կուշտ էր:

Երկու բարեկամները, իսկոյն ապրելու եղանակը փոխեցին, երկու անկողնով սենեակ մը վարձեցին հասարակ պանդոկի մը մէջ, և ճաշը ճաշարանէն կուտէին: Ամէն օր երկու երեք հայրուկներ իրենց հաշուին, կը ճաշէին հոն: Հաճին հայրուկի մը փոքրիկ պարտքն ալ վճարեց: Պրբնով դարձեալ ուրախ ու գոհ էր: Ան մինչեւ իսկ հայրենասիրական երգ մը յօրինեց, զոր վրչերները սենեակին մէջ կերպէր: Երբ որ պանդոկի մանկամարդ սպասուհին կանցնէր, պիտոյութիւններ կընէր, ու կատակներով կը բոսնուր: Երիտասարդութիւնը, միշտ կը յարթէ վնասութեան: Սահելով անցան քանի

մը ուրախ, շատ ուրախ օրեր, և անոնց հետ հրէայի ֆրանքները:

Իրիկուն մը, մէկը դուռը զարկաւ:

Պրբնով, որ իր հայրենասիրական երգը կերպէր, ընդհատելով բարձր պոռաց:

— Entrez:

Պանդոկապետն էր մտնողը: Խիտ զէմքով:

— Պարոն, ըսաւ ան, պաղ քաղաքավարութեամբ մը, ներեցէք որ ձեր երգը ընդհատեցի:

— Այնչ, ոչինչ, պատասխանեց Պրբնով, ի՞նչ կը փափաքիք:

Պանդոկապետը հեգնական ժպիտով մը ըսաւ:

— Ի՞նչ կրնայ փափաքիլ պանդոկապետ մը իր հիւրերէն: Անոր կանոնաւոր վճարումը:

Պրբնով զարմացած պանդոկապետին նայեցաւ:

— Ես կը վճարեմ կար, պարոն:

— Բայց չարաթ մը կայ, որ բան չէք սուած իսկ գիտէք որ օրէնք է, երկու օրը անգամ մը վճարել:

Պրբնով ատ ընդդիմախօսութիւնէն զայրացաւ և շուտ մը ըսաւ:

— Ապահով եղիք, պիտի վճարեմ:

— Ինչո՞վ, երգո՞վ: Ես ձեր ոչ մէկ իրեղէնը կը տեսնամ հոս: Ներեցէք պարոն, պէտք է այս գիշեր վճարել, ձեզի և ձեր ընկերոջ համար... գիտէ՞ք, որ մեր հօգիները շտա այրած են բարի մարդիկ և ձեզի պէս իսկ երգողներէ:

Պրբնով զայրոյթէն փրփրաց: Նա ժիլէի գրպանը խոտնեց ուր չորս ֆրանքներ կային, բայց միայն քանի մը մանր դրամներ հանեց:

Եւ ապա մնաց:

— Գտնե՛ք եւ ու՛ր ֆրանք կուզեմ, ըսաւ պանդոկապետը պաղ կերպով, անշարժ ու ստուն նայուածք մը նետելով Պրբնովին:

— Հոս կողոպտեր են զիս, գոչեց:

— Պարոն, ատ շատ հին պատմութիւն է, կը ճանչնամ... ըսան եւ ուր ֆրանք վճարեցէք:

— Չունիմ, ի՞նչ պիտի վճարեմ:

Պրբնով գծնդակ դրութեան մէջ կը գանուէր: Ան բնագոգումով աչքը դրան յարած հաճին երեւնալուն կը սպասէր որ միտսին ինչ ընելիքներ տեսնեն: Պանդոկապետը դրան առջեւ կեցած պատասխանի կը սպասէր:

— Վճարեցէ՞ք:

— Չունիմ:

— Ոստիկանութեան պիտի յանձնեմ ձեզ իրբեւ մօրը մանածը ծախող... Ես լաւ կը ճանչնամ պուկարները:

Պրբնով շառագունուեցաւ, և արիւնը գլխուն զարկաւ, պանդոկապետին վրայ յարձակեցաւ բոսնեցը վերցուցած:

— Ե՛տն Ռուճանացի. բերանդ կը կոտորեմ:

Աս ըսելով իր երկաթեայ ձեռքը անոր թիկունքին բեռցուց: Պանդոկապետը քիչ մնաց պիտի պոռար: Յանկարծ գաւիթը ստուկութեամբ վազող մարդու մը արագ քայլերը լսուեցան, ու չորագուշակ աղաղակներ լսուեցան:

— Պօ՛ք, ֆօ՛ք, (հիգե՛հ, հրգե՛հ):

Թարգմ. Պ. ՍԻՐԻՄՃԵԱՆ

(Ետնադրակի)

անտեղի տրտունջ և դժգոհութիւններ յայտնած ըլլալուն համար իրենց պարագաներուն :

— Տոմինիկեան կղերները որոնք Մուշի մէջ հաստատուելու ջանքեր կընեն, նորէն Սղերգ հասեր են : Անշուշտ իրենց ուկիները Բաղէշի արգաւանդ հողին վրայ առասպելական յաջողութիւն մը պիտի ունենան :

— Բաղէշի առաջնորդը վան մեկներ է տեղւոյն որբանոցներն ու ուխտատեղիները այցելու համար, որբանոցի տնօրէն Գէորգ Մարգարեանի հետ : Իր բացակայութեան ընթացիկ գործերը պիտի վարէ Պետրոս Վ. Շահինեան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Դուռը ծանուցագրով մը յայտնեց է ուսական գեւական Զինովիէվի թէ՛ Պանք Օթոմանի հետ համաձայնութեան եկած է մնացած պատերազման պարտքը վճարելու համար, որուն պայմանաժամը յունիս 14ին էր :

— Կ. Պոլսոյ Սերպիական գեւական, զօրավար Կրուիչ, Բ. Դրան և Սուլթանին ծանուցագիր մը մատուցեց է. ուր կը յիշէ նովի-Պազարի դէպքերը և կը յայտարարէ որ, ն թէ Օսմ. կառավարութիւնը զարման մը չի տանի սերպ ժողովրդին սպաննացող անկարգութեանց, որոնք սահմանազխին ապահովութիւնը կը վտանգեն, Սերպիա պիտի ձեռք առնէ հարկ եղած միջոցները : Բայց մինչեւ այսօր, հակառակ Կ. Պոլսէն տրուած հերքումներուն, նովի-Պազարի մէջ կարգը չէ հաստատուած և նոր քայմաքամին վիճակը անսպասով է :

— Կ. Պոլսոյ թուրք պաշտօնական շրջանակներուն մէջ այն կարծիքը տարածուած է թէ, սերպ կառավարութեան պահանջները այնքան ալ ճշտութեամբ չեն պատկերացներ վերին Պոսնայի վիճակը, և գիտել կուտան թէ Սերպիա ինքն ալ շատ անփոյթ գտնուած է սահմանազխի պահանջներուն մասին Վրանիաի դաշինքը գործադրելուն մէջ :

— Չորս ալպանացի երեւելիներ, նախք փաշա, Ազիզ փաշա, Հասան պէյ և իր ուղիւն, որոնք Կ. Պոլիս կը բնակէին, ձերբակալուեցին ու թող ալպանացիներու հետ, յեղափոխական կոմիթէներու հետ յարաբերութեան մէջ գտնուելուն ամբաստանութեամբ :

— Սուլթանը հրամայեց է նախարարական խորհրդին, որ ուսումնասիրէ Սերպիոյ և Թուրքիոյ սահմանազխութեան խնդիրը, որպէս զի այլևս միջագէպի տեղի չի ապ :

— Բ. Դուռը հրահանգ տուեց է կրեական խնդրին միջամտող չորս պետութեանց մայրաքաղաքներուն մէջ գտնուած իր պետականներուն, որպէս զի Դրան շնորհակալութիւնները յայտնեն կղզւայն մէջ օսմանեան գերիշխանութիւնը անփոփոխ պահած ըլլալուն համար :

— Ահեղ սարսափ մը տիրեց է Սուլթանին և զինքը շրջապատողներուն մէջ, Սուլթանին պառկած սենեակներուն կից պարապ մէկ սենեակէ մը ծագած հրդեհին պատճառաւ : Կէս ժամուան աշխատութեան մը ետքը, Երլուզի շրահակիրները հրդեհը մարեցին : Հրդեհին պատճառը գեո. յայտնի չէ : Սուլթանը շատ զայրացած և խիստ քննութիւն մը բացած է : Ֆրանսայի, Աւստրիոյ և Ռուսիոյ պետականներուն այցելութեան միջոցին, Սուլթանը միայն այդ նիւթին վրայ խօսած է :

Մ Ա Կ Ե Դ Ո Ւ Ն Ի Ա

«Բորէս. Բօլիթիքոի Աթէնքի թղթակիցը կը հաղորդէ թէ՛ Սթրուսայի հովիտին մէջ պուլկարական բազմաթիւ շէթէներ երեւան եկած են : Թուրք կառավարութիւնը այս առթիւ բազմաթիւ ձեռքարկներ արեց է, որոնց մէջ կայ նաեւ քահանայ մը. այս վերջինին տան մէջ բազմաթիւ փասակար թուղթեր և զէնքեր գտնուած են :

— Վերջերս Սելանիկի մէջ շատ մը պուլկարներ ձերբակալուեցին, իբրեւ Մակեդոնական կոմիտէի անդամ : Ասոնց հարցաքննութիւններէն յայտնի եղեց է թէ՛ այդ մարդիկը սոսկալի ոճրագործութիւն մը կը պատրաստեն եղբ. այսինքն տինամիթով օդը պիտի բարձրացնեն կառավարական շէնքը և պիտի սպաննեն շատ մը քրիստոնէաներ, որոնք յեղափոխական գործին արգելք կը ջանան ըլլալ :

Տաճիկ կառավարութիւնը յոյն լրտեսներու ձեռքով անոնց տուներէն գտեր է շատ մը մազդէրի հրացաններ, 15 անտուկ փամփուշտ, մեծ քանակութեամբ տինամիթ, քանի մը գիրի մեքենաներ ֆրանսերէն, յունարէն և պուլկարերէն տառերով :

Ձերբակալուածները զիջեցան և ձիւտը զօրքերու ընկերակցութեամբ նէտի Դուլէ առաջնորդուեցին :

— Մակեդոնիոյ բոլոր կարեւոր կէտերուն մէջ տաճիկ աւազակախումբեր կազմուեցին տեղական քրիստոնէայ ազգաբնակչութեանց վրայ յարձակելու, կողոպտելու և ջարդելու նպատակով : Ասոնց մէջ իր ահարկու անգթութեամբ նշանուոր հանդիսացեց և Պանիա գիւղի Մուհամմադ Իպրահիմը, իր ընկերներով :

— Սելանիկի շրջանայ գիւղերուն մէջ, ուր յոյն և պուլկար խառն բնակչութիւն մը կայ, լուրջ կռիւ մը ծագեց է : Պուլկարները պահանջեցին եկեղեցական արարողութեան պուլկարերէն լեզուով կատարուելը, իսկ Սելանիկի յունաց առաջնորդը չէ ուզեց իր համաձայնութիւնը տալ, սիրտ առնելով նոյն քաղաքին կուսակալէն : Բ. Դուռը խնդիրը փակելու համար, բոլոր հիկեղեցիները գոցել տուեց է. բայց ժողովուրդը աւելի մեծ յուզման մէջ կը գտնուի :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիական հետեւակազօրաց խումբ մը ամսոյն 20ին վաթէրիլուֆի մէջ ալէտքի մը ենթարկուեց է : 10 մեռեալ, 4 վիրաւոր և 66 գերի տուեց է :

— Անգլիացոց կողմէ ձիւտու գրաւումը իր ազդեցութիւնը սկսած է ունենալ : Շարաթէ մը ի վեր 50ի շափ պօէրներ յետիոտան կը ճամբորդեն : Բայց պօէրին ճամբար զէնքէն աւելի ձի պետք է, որովհետեւ անիկա է պատերազմին երկարելուն զխաւոր ազգակներէն մին : Հեծանկի պակասին, պաշարի չգոյութեան և ցուրտին սաստկութեանը պատճառաւ պօէրները պիտի ստիպուին դէպի հարազաղթելու, ուր օդը աւելի մեղմ է :

— Ֆրէտէրիք Հարրիսըն «Տէյլի նիւզ»ի մէջ կրկին նամակ մը հրատարակեց է Թրանսվալի պատերազմին վրայ : «Երբ կրան թէ դժուարին է, հակառակ ծախսուած 1,250,000 ֆրանքին 63,000 գերի սնուցանել, մենք կը հարցնենք. քանի որ այդքան դժուարին է, ո՞վ հնարեց շարչարանքի այս դժուարին ձեւը :

Պէտք է հարցնել որ ծախսուած այդ միլիոնը կրնա՞յ փոխարինել այն միլիոնաւոր սթէրլինի ձիերը, անասունները, հագուստները, ազարակները, որոնք եղեւնականօրէն շնչուցան : Անգլիոյ մէջ մէկը չի կար որ զգուշացնէր զօրավարները անմեղներու այդ զարհուրելի ջարդերէն՝ որ տեղի ունեցան «զինտորական պատճառներով» : Անցեալները անգլիական զօրավար մը նկարագրած էին, որ պօէր տղու մը կարգալ կը սորվեցնէր : Ահաւասիկ նոր նկարագրութեան մը նիւթը. անգլիացի զօրավար մը՝ որ քննական պաշտոն մը կընէ . . . անմեղ մանկիկներու հազարաւոր գերեզմաններուն շուրջը :

Սխալը աւելի ծանր է քան թէ գործուած ոճիրը : Պատերազմը ցեղային անվերջ վրէժխնդրութեան մը փոխուած է. ցեղ ցեղի

դէմ : Գալով Անգլիոյ պատիւին, հազիւ հարիւր տարիներու շրջան մը կարենայ շնջել անոր ճակատին դրոշմուած արատը» :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Հէրպէրթ Պիլմարք ճառ մը արտասանեց է այն ուսանողներուն՝ որոնք իր հօր գերեզմանը այցելած էին :

«Կան մարդիկ ըսեր է, որոնք խնդրոյ նիւթ կը դարձնեն Պիլմարքի քաղաքականութեան սկզբունքներն ու աւանդութիւնները : Եւ սակայն նոյն սկզբունքներն էին, որ Գերմանիոյ մեծութիւնը առաջ բերին և անոնց պէտք է յարիլ իր բարգաւաճումը ապահովելու համար» :

Այս «կան մարդիկ» բացատրութիւնը ուղղուած կերեւայ արդի գերմանական գիւանադպիր Պիլուփի և Կիյեօմ կայսեր :

Ի Տ Ա Լ Ի Ա

Հուշակաւոր իտալացի աւազակապետ Մուզօլինօն ձերբակալուելու համար իտալական կառավարութիւնը մեծ պատրաստութիւններ տեսած է, իմանալով որ Մուզօլինօ Բէճճիօի անտաններուն մէջ կը պահուի : Շատ մը քաղաքացիներ որոնք հրենց կեանքէն կը վախնան, անհամբեր աւազակապետին ձերբակալման կսպասեն : Մուզօլինօ երգում բրած է սպաննել այն մարդիկը որոնք զինքը դատապարտեցին, և արդէն անոնցմէ եօթը միւս աշխարհ ճամբած է :

Ե Դ Ի Պ Տ Ո Ս

Անցեալ շաբթու Եգիպտոսի մէջ 23 նոր ժանտախտի դէպք պատահեց է, որոնցմէ 7 մահ առաջ եկեց է : Ասոնց 20ը Չակազիկի և մէկը Ազեքսանդրիոյ մէջ աւելի ունեցեցին :

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Տ. Տօլապեան, Պուրքէշ. — Չեր նամակը յաջորդով կը հրատարակենք :

— Տ. Շահմիր Պուրքէշ. — Չեր նամակը աւելորդ կը համարենք հրատարակել, քանի որ Տ. Տօլապեան աւելի յայտնապէս խնդիրը պարզած է իր նամակին մէջ :

— Տէր կարապետ և Տ. Թորիկեան Պուրկալ. — Տեղի անձկութեան պատճառաւ ձեր նամակները յաջորդ թիւին ձգած ենք :

— Տ. Ա. Գ. Ֆիլիպպէ. — Չեր ուզած ձրարը զրկեցինք : Հասցէներու փոփոխութիւնները նոյնութեամբ կատարուած են :

Отговорникъ:
Д-ръ МХГХРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимностьъ — Варна.